ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 48 (2058) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 23, 2023
VOLUME 43, NO. 48 (2058) SATURDAY DECEMBER 23, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

# Կազայի Շարունակուող Ողբերգութիւնը

Հոկտեմբեր 7-ին, պաղեստինեան Համաս կազմակերպութեան զինեալները Կազայի հատուածէն անակնկալ յարձակում գործելով իսրայէլեան սահմանամերձ շրջաններուն վրայ սպանեցին 1200 հոգիներ ու իրենց հետ տարին մօտ 240 պատանդներ, որոնց մեծ մասը տակաւին կը մնան իրենց մօտ:

Համասի այս խիզախ գործողութիւնը շշմեցուց իսրայէլացի ժողովուրդին ու բացայայտեց իրենց բանակի ու հետախուզական կառոյցներու խոցելիութիւնը: Տեղի ունեցած սպանդը զօրակցութեան ալիք յառաջացուց՝ Իսրայէլի նկատմամբ, մանաւանդ որ, Համաս պատանդ վերցուցած էր երեխաներ, տարեցներ ու կանայք: Հետագային, աշխարհի վերաբերմունքը սկսաւ կամաց-կամաց փոխուիլ՝ ի տես Կազայի մէջ տեղի ունեցող անխնայ ռմբակոծութեան, որոնք չեն խնայեր բնակելի շէնքեր, հիւանդանոցներ ու կենսական ենթակառոյցները՝ խլելով անմեղ պաղեստինցիներու կեանքը, որոնց մէջ հազարաւոր երեխաներ:

Աւելի քան երկու ամիսէ ի վեր շարունակուող այս պատերազմի երկու բեւեռներուն կանգնած են ծայրայեղներ, որոնք կը հետապնդեն իրենց քաղաքական շահերը, ի վնաս անմեղ ժողովուրդի: Մէկ կողմը կեցած է կրօնամոլ, ծայրայեղական Համասը, իսկ միւս կողմը՝ ծայրայեղական ու դարձեալ կրօնամոլ Հրեայ շարժումները ներկայացնող Իսրայէլի կառավարութիւնը՝ գլխաւորութեամբ Բենիամին Նեթանյահուի, որ պատերազմի միջոցաւ կ'ուզէ նաեւ լուծել իր անձնական հարցերը, որոնք կառնչուին փտածութեան հարցերով իր դէմ եղած դատական մեղադրանքներուն:

Իսրայէլեան կողմը վճռած է համասականները արմատախիլ ընել Կազայէն եւ վերջնականապէս ձերբազատուիլ անոնց մնայուն սպառնալիքներէն: Կազան «մաքրելէ» ետք ինչ պիտի ըլլայ յաջորդ քայլը, Իսրայէլի համար նոյնիսկ յստակ չէ: Մինչեւ 2005 թուականը Կազան կը գտնուէր Իսրայէլեան բանակի գրաւման տակ: Այդ զօրքերը կ'ենթարկուէին յաճախակի յարձակումներու՝ պաղեստինեան դիմադրութեան կողմէ: Կազայէն քաշուելով Իսրայէլ կը խորհէր որ, պիտի կարողանայ աւելի լաւ պաշտպանուիլ, սակայն

Շար.ը էջ 6

# Վարչապետ Փաշինեան Կ'արձագանքէ Փութինի Յայտարարութեան, Թէ Հայաստանն է Որ Արցախը Ճանաչցած է Ատրպէյճանի Կազմին Մէջ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Պետրոս Ղազարեանի հետ հարցազրոյցի ընթացքին

«Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման որեւէ առաջարկ բանակցային գործընթացում չի նշանակել ԼՂ հարցի կարգաւորում», Դեկտեմբեր 19-ի երեկոյեան Հանրային հեռատեսիլի ալիքին տուած իր հարցազրոյցի ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Որեւէ թուղթ չի եղել երբեւէ սեղանի վրայ, որ ստորագրելով նշանակէր Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծում: Բոլոր տարբերակները, որ եղել են սեղանի վրայ, «մատրիտեան սկզբունքներէն» սկսած, ենթադրած են ԼՂ հարցի չլուծում», - շեշտեց Փաշինեան:

Ըստ վարչապետին՝ միայն մէկ տարբերակ եղած է 1999-ին, որ ստորագրելու պարագային կարելի էր ըսել, որ ԼՂ հարցը լուծուած է՝ Մեղրիի ու Արցախի փոխանակումը, «Մեղրին յանձնւում է Ատրպէյճանին, ԼՂ-ն միացւում է Հայաստանին»:

«Դա յատուկ էր արուած, որ Լեռնային Ղարաբաղի հարցը մահակ լինի պահել Հայաստանի գլխին, միգուցէ նաեւ Ատրպէյճանի:

Պատասխանելով հաղորդավար Պետրոս Ղազարեանի այն հարցին թէ, Ինչո՞ւ ըսիք՝ նշաձողը պէտք է իջեցնել, Փաշինեան պատասխանեց՝ «որովհետեւ մենք ուզում էինք ինքնորոշման մասին մեր պատկերացումները համապատասխանեցնել ինքնորոշման մասին միջազգային հանրութեան պատկերացումներին: Դա 1996 թուականի Լիզպոնի գագաթնաժողովի պատկերացումներն են»:

Արձագանքելով Ռուսաստանի նախագահի այն պնդումներուն, թէ Հայաստանն է որ, Արցախը ճանաչել Ատրպէյճանի կազմին մէջ, ոչ թէ Մոսկուան, Նիկոլ Փաշինեան ըսաւ. - «2020 թուականի Նոյեմբերին եւ Դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնութեան նախագահը յայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանի մաս է, այդ յայտարարութիւնները հրապարակային են: Այդ յայտարարութիւնն, իմ ընկալմամբ, հակասել է 2020 թուականի Նոյեմբերի 9-ի յայտարարութեանը»:

Շար.ը էջ 5

# Ատամ Շիֆ Կոչ Կ'ընէ Յաւելեալ Օգնութիւն Ներառել Հայաստանին

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ Ատամ Շիֆ նամակ յղած է Ներկայացուցիչներու Տան եւ Ծերակոյտի ղեկավարութեան՝ կոչ ընելով Նախագահ Պայտընի Ազգային անվտանգութեան յաւելեալ ֆինանսաւորման օրինագծին մէջ ներառնել Հայաստանին տրամադրուող մարդասիրական օգնութիւնը:




Գոնկրէսական Ատամ Շիֆ

«Հայաստան կ'աջակցի աւելի քան 100,000 փախստականներու, որոնք տեղահանուած են Լեռնային Ղարաբաղէն 2023 թուականի Սեպտեմբերին՝ Ատրպէյճանի կողմէ ռազմական յարձակումներուն հետեւանքով, եւ ընդհանուր առմամբ մինչեւ 150,000 փախստականի 2020 թուականի 44-օրայ հակամարտութենէն յետոյ:

«Արցախը արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի 10 ամիս տեւած շրջափակմամբ արցախցիներուն սովի ենթարկէ յետոյ, ատրպէյճանական ուժերը Սեպտեմբերի 19-ին լայնածաւալ յարձակում գործեցին Արցախի վրայ, որուն արդիւնքով առնուազն. 200 զոհ եւ 400 վիրաւոր, անոնց շարքին՝ երեխաներ, կանայք եւ ծերեր, ինչը դրդեց գրեթէ ամբողջ բնակչութեան փախ-

Շար.ը էջ 6

# Ռուս-Հայկական Դաշնակցութիւնը Փորձութեան Կ'ենթարկուի. Լաւրով

Ռուսաստանի եւ Հայաստանի դաշնակցային կապերու ամրութիւնը քննութենէ կ'անցնի, քանի որ Արեւմուտքը կը փորձէ խաթարել երկու պետութիւններուն յարաբերութիւնները, ըսուած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրովի ուղերձին մէջ:

Այդ ուղերձով ան Դեկտեմբեր 15-ին դիմած է «Հանրային դիւանագիտութեան դերն ու տեղը Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու զարգացման գործին մէջ» նշանաբանով Մոսկուայի մէջ տեղի ունեցած համաժողովին:

«Այսօր Մոսկուայի եւ Երեւանի դաշնակցային կապերը փորձութեան կ'ենթարկուին, Արեւմուտքը կը ցանկայ սեպ խրել մեր եղբայրական ժողովուրդներու յարաբերութիւններուն մէջ», ըսած է Լաւրով:

Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան ղեկավարը նաեւ համոզմունք յայտնած է, որ «քննարկումներու բերումով պիտի մշակուին յստակ առաջարկութիւններ եւ պիտի հաստատուին փոխադարձ օգտակար չփումներ»:

## Շնորհաւոր Սուրբ Ծնունդ

Կաթողիկէ համայնքի Ս. Ծննդեան տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ Հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, առողջութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Արտակ Զաքարեանը «Սխալմամբ Հանրայնացրել է Ձմեռ Պապին Գրած Նամակը»

Հ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

*«Մեր պետութիւնն այժմ գտնւում է պատմական այնպիսի կրախի առջեւ, որին անհրաժեշտ է միայն համազգային նոր զարթօնք, վերածնունդ, ռեւանշ: Այլապէս բախտորոշ գէոպոլիտիկ քամիները խորտակման են տանելու հայկական պետականութեան նաւակը (Սերժ Սարգսեանի թողած ինքնավստահ զարգացող երկրից վերածուել ենք բախտի քմահաճոյքով ալեկոծ ճօճուող ու այս ու այնկողմ բախուող նաւակի)»:*

*Չէք հաւատայ, բայց այս մէջբերման հեղինակը ՀՀԿ-ական է, նախկին փոխնախարար եւ պատգամաւոր Արտակ Զաքարեանը: Տպաւորութիւն է ստացւում, որ Զաքարեանը ֆէյսպուքեան գրառման ժանրում սխալմամբ հանրայնացրել է Ձմեռ պապիկին գրած նամակը, որտեղ ցանկացած երեխայ, ինչ տարիքում էլ լինի, ինչպէս գիտենք, կիսւում է իր ֆանտաստիկ երազանքներով:*

*Երբ ՀՀԿ-ն է խօսում զարթօնքի, ռեւանշի մասին, դա ոչ այլ ինչ է, քան ֆանտաստիկ, եթէ կ'ուզէք՝ երկնագոյն երազանք: Զաքարեանի գրառմանն անդրադառնալու պատճառը, սակայն, ոչ այնքան դրա առաջին, որքան երկրորդ նախադասութիւնն է. արդեօ՞ք նախկին պաշտօնեան սթափ է մտածել այն շարադրելիս, թէ՞ ցանկալին իրականութեան տեղ դնելու հերթական նոպայի մէջ է եղել:*

*Փաստօրէն, Սերժ Սարգսեանը հերիք չէ մեզ թողել էր զարգացող, հետն էլ, պարզւում է, «ինքնավստահ զարգացող» երկիր, այն կարգի ինքնավստահ, որ Սինկաբուր դառնալուց «5 րոպէ» պակաս էինք: Մինչդեռ... եղաւ 2018-ի յեղափոխութիւնը ու ՀՀ «անշնորհակալ» քաղաքացիները, փաստօրէն, չցանկացան լինել զարգացող երկրի քաղաքացիներ ու ինքնավստահ մերժեցին դրա «գլխաւոր ճարտարապետին»:*

*2016 թ. Ապրիլեան պատերազմից յետոյ Փութինի ուղարկած, Սերժ Սարգսեանի նշանակած վարչապետ Կարէն Կարապետեանն էր, չէ՞, որ իր տեխնոկրատների կառավարութեան միջոցով փորձում էր Սերժ Սարգսեանի «պահած-չահած», մեզ թողած երկիրը տանել Սինգապուրի ճանապարհով, մասնաւորապէս Սիւնիքի մարզն էլ դարձնել Իսրայէլ՝ միաժամանակ կառավարութեան անդամներին սովորեցնելով «տարրական էթիկա», ասենք՝ «թարգել» «պրիմիտիւ գողութեամբ» զբաղուելը:*

*Այդ՝ ինքնավստահ զարգացող պետութեան ղեկավարը, նշենք, այսօր դատարանի առաջ է կանգնած դիզվառելիքի «պրիմիտիւ գողութեան» գործով, ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործով էլ պատասխանողի կարգավիճակ ունի: Արդէն առիթ ունեցել ենք յիշեցնելու, որ նրանից բացի՝ «ինքնավստահ զարգացող» պետութեան պատասխանատու պաշտօններ զբաղեցրած այլ անձինք էլ նոյն՝ Հակակոռուպցիոն դատարանի՝ վարոյթ ընդունած գործերով պատասխանողներ են, այդ թւում՝ Կարէն Կարապետեանին նախորդած Յովիկ Աբրահամեանը, որը քառօրեայ պատերազմից յետոյ, ի դէպ, փարիսեցիաբար յայտարարում էր «գոտիները ձգելու», պետական միջոցները խնայողաբար ծախսելու մասին:*

*Ի դէպ, կառավարութեան վերջին նիստի ժամանակ յայտնի դարձաւ, որ Սերժ Սարգսեանի թիկնազորի պետ, «Սերժի Վաչօ» մականունով յայտնի, միլիարդատէր Վաչագան Ղազարեանից բռնագանձուած «Եռաբլուր» պանթէոնին յարակից երեք հողատարածքները ամրացուել են Պետգոյքի կոմիտէին:*

*Այ, եթէ յիշեալ անձինք հալալ քրտինքով վաստակած լինէին իրենց ունեցուածքը, ոչ թէ՝ պետական միջոցների թալանի ու իւրացման, Սերժ Սարգսեանը մեզ ժառանգած կը լինէր ոչ թէ զարգացող, այլ փթթած, ծաղկած, բարգաւաճած, «Սինկաբուրին «ծալած, տակը դրած պետութիւն», որի բանակն այն աստիճան արդիականացուած կը լինէր, այնքան զինուած ու ամրակայուած, որ Ատրպէյճանը ուխք չէր անի մտածել գոնէ մի անօդաչու թռչող ճանճ գնել՝ ԼՂ հարցը պատերազմով լուծելու համար:*

*Ըստ Զաքարեանի, փաստօրէն, ՀՀ-ն այժմ վերածուել է «բախտի քմահաճոյքով ալեկոծ ճօճուող ու այս ու այնկողմ բախուող նաւակի» (ինչպիսի՜ չքեղ համեմատութիւն): Նախկին պատգամաւորը ակնյայտօրէն «օպերաները» խառնել է, քանի որ հե՛նց այս ու այնկողմ բախուող նաւակ յիշեցնող պետութիւն է մեզ թողել նրա քաղաքական պատրոնը՝ Սերժ Սարգսեանը:*

*«Բախտ» ասելով՝ Սերժ Սարգսեանի օրօք հասկանում էին ՀՀ ռազմավարական դաշնակցին, որի քմահաճոյքով էլ Հայաստանը կառավարւում էր ներսից ու դրսից, տակից ու վրայից, այն աստիճան, որ ՀՀ-ն, օրինակ, մի գիշերում Մաքսային միութեանը միանալու որոշում էր կայացնում, թէեւ մի քանի տարի ինքնավստահ բանակցել էր Եւրոպական միութեան հետ Ասոցացման եւ Ազատ առեւտրի համաձայնագրերի ստորագրման շուրջ:*

*Արտակ Զաքարեանին թերեւս պէտք է բարեկամաբար յորդորել Սերժ Սարգսեանի թողած պետութեան վերաբերեալ կեղծ տեղեկանք ներկայացնելու փոխարէն հարցում անել Կառավարութիւն եւ ստանալ 2017-ին արուած (իշխանութիւնների ֆինանսաւորմամբ) մի վերլուծութիւն, ըստ որի՝ կրիտիկական ենթակառուցուածքների զարգացման տեսակարար կշռով Հայաստանը, պայմանական միաւորներով, 10-1 հաշուով զիջել է Ատրպէյճանին: Ընդ որում՝ այս հաշուարկի մէջ ներառուած չեն էլեկտրաէներգետիկ համակարգը, տրանսպորտը եւ սպառազինութիւնը եւ եթէ ներառուէին, յարաբերակցութիւնը կը լինէր 20:1:*

*Այդ վերլուծութեան մասին, ի դէպ, 2021-ին Ազգային ժողովում՝ կառավարութեան ծրագրի 2020թ. կատարողականի զեկոյցի քննարկման ժամանակ, խօսեց նաեւ Նիկոլ Փաշինեանը՝ արձանագրելով՝ Սերժ Սարգսեանի թողած՝ Հայաստանի Հանրապետութիւնում ռազմարդիւնաբերական համակարգն սկսեց ձեւաւորուել միայն 2016 թուականի Ապրիլից՝ Ատրպէյճանից 11 տարի ուշացումով, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտը, ի տարբերութիւն Ատրպէյճանի, ՀՀ-ում նախարարական մակարդակով 2017 թուականին դեռեւս ձեւաւորուած չէր: Մինչդեռ Ատրպէյճանում 13 տարի առաջ այդ ոլորտում նախարարութիւն էր ձեւաւորուած, եւ 2017 թուականին արդէն Ատրպէյճանն ունէր երկրի ուղեծրում 3 արբանեակ, որոնցից մէկը, որը գնել էր, հետախուզական:*

*«Այո՛, Ատրպէյճանը հետախուզական արբանեակ էր գնում, իսկ Հայաստանի իշխանութիւննե-*

Շար.ը էջ 6

# Փութինի Ուղերձը եւ Ալիեւի Ֆաշիզմը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍԵԱՆ

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փութինը ուղերձով դիմել է ԱՊՀ երկրների կառավարութիւնների ղեկավարներին՝ կոչ անելով պայքարել պատմութեան խեղաթիւրման եւ ֆաշիզմի հերոսացման դէմ: Փութինը յիշեցրել է Հայրենական մեծ պատերազմը, ֆաշիզմի դէմ խորհրդային ժողովուրդների համատեղ պայքարը եւ յորդորել, որ ԱՊՀ երկրներում յարգեն «Անմահների գունդ» շարժումը:*

*ԱՊՀ երկրենրի կառավարութիւնների ղեկավարների Խորհրդի նիստին ներկայ է նաեւ Ատրպէյճանի վարչապետ Ասադովը: Նա ելոյթ է ունեցել եւ հերթական անգամ իր երկիրը ներկայացրել որպէս բազմազգ, բազմամշակութային եւ հանդուրժողական, որտեղ բոլոր քաղաքացիները պաշտպանուած են սահմանադրութեամբ եւ օրէնքով, նրանց իրաւունքները՝ «անկախ ազգութիւնից եւ դաւանանքից երաշխաւորուած»:*

*Թէ ի՞նչ իրաւունքների մասին է խօսքը, երբ մէկ շաբաթուայ ընթացքում տասնմէկերորդ լրագրողն է կալանաւորուել՝ այլ հարց է: Աւելի էական է Ռուսաստանի նախագահի ուղերձը դիտարկել Արցախում իրավիճակի համապատկերին: Շուշի մուտք գործելու օրն ատրպէյճանցի զինուորականները փշրել են ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանեանի կիսանդրին, աւերուել են ԽՍՀՄ աւիացիայի մարշալ Խանփերեանցի եւ գեներալ-գնդապետ Պարսեղովի տունթանգարանները, օկուպացուած բնակավայրերում ոչնչացուել են ոչ միայն ղարաբաղեան, այլեւ Հայրենական մեծ պատերազմում զոհուածների յուշահամալիրները:*

*Սա է հենց իրական ֆաշիզմը, որ շարունակւում է ռուսական զօրախմբի հրամանատարութեան աչքի առաջ: Ու՞մ է Վլադիմիր Փութինը ֆաշիզմի հերոսացման մէջ մեղադրում՝ յայտնի է՝ Մերձբալթեան երկրներ, Ուքրանիա, նախկին կոմունիստական Արեւելեան Եւրոպա: Բայց ու՞մ է «Անմահների գնդի» համախմբման կոչ անում Ռուսաստանի նախագահը: Ֆաշիստական Ատրպէյճանի՞ն:*

*Փութինի ուղերձը փորձ է՝ արդարացնելու Ուքրանիայի դէմ պատերազմը: Ատրպէյճանի հետ Լեռնային Ղարաբաղում «սիներգիան» լիովին ապալեգիտիմացնում է «ընդհանուր պատմութիւնը յարգելու» եւ «ֆաշիզմի հերոսացման դէմ պայքարը համատեղելու» փութինեան քարոզչութիւնը: Եթէ նախկին ԽՍՀՄ տարածքի մի սուբիեկտ կայ, որ արժանի է Ռուսաստանի ոչ միայն յարգանքին, այլեւ բացարձակ հովանաւորչութեանը, ապա դա Լեռնային Ղարաբաղն է, որտեղ Հայրենական մեծ կռուող պատերազմին զօրակոչուել է իւրաքանչիւր չորրորդ բնակիչ, զոհուել երկուսից մէկը:*

*Վիճակագրութիւնը դաժան եւ անհերքելի է. ԼՂԻՄ-ի 139 հազար բնակչից զօրակոչուել է 42 հազարը, 21 հազարը՝ զոհուել: ԽՍՀՄ հերոսի կոչման է արժանացել 21 արցախցի: Նման ցուցանիշ ԽՍՀՄ ժողովուրդներից ոչ ոք չունի, էթնոցիդի այս պատկերը նոյնիսկ Պելառուսի եւ Ռուսաստանի կորուստներն է գերազանցում: Եւ ի՞նչ ունենք այսօր՝ ֆաշիզմի հերոսացման դէմ պայքարի մասին Վլադիմիր Փութինի քարոզչութեան սնանկութեան վկայութիւնն է:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակէտները

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

# Փաշինեան Հանդիպած է Գերիներու Հարազատներուն Հետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը Հայաստան վերադարձած շիրակցի գերիներու հարազատներուն հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան տիկնոջ՝ Աննա Յակոբեանի հետ հանդիպում ունեցած է անցած շաբաթ Հայաստան վերադարձած շիրակցի գերիներու հարազատներուն հետ:

Նիկոլ Փաշինեան, ըստ կառավարութեան հաղորդագրութեան, հաւաստիացուցած է, որ այս երեք տարիներու ընթացքին ամէն հնարաւոր բան կատարուած է գերիներու վերադարձին համար:

«Ձնայած պարզ է, որ բոլորս ել անհամբեր էինք օր առաջ տեսնել նրանց վերադարձը, բայց շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ համբերատարութեան համար, որովհետեւ դա շատ կարեւոր էր», ըսած է վարչապետը եւ յաւելած, որ ամէն բան պէտք է կատարուի, որպէսզի անոնք վերադառնան բնականոն կեանքի:

Երեւանի ու Պաքուի համատեղ յայտարարութենէն վեց օր անց 32 հայ գերիներ հայրենադարձուեցան: Վերադարձածներէն 26-ը շիրակցի պահեստազօրայիններն են, որոնք 44-օրեայ պատերազմէն մէկ ամիս անց Արցախի Խծաբերդի դիրքերէն գերեվարուած էին:

Ատրպէյճանի մէջ, ըստ հայաստանցի իրաւապաշտպաններու, հիմա 23 հայ կը պահուի, անոնց շարքին՝ Արցախի նախկին ղեկավարները:

# ՄԻԵԴ-ը Հայ Զինծառայողներու Սպանութեան Հետ Կապուած Ատրպէյճանի Դէմ Որոշում Կայացուցած է



ՄԻԵԴ-ը հայ զինուորներու սպանութեան հետ կապուած Ատրպէյճանի դէմ որոշում կայացուցած է Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը հրապարակած է «Նարայեանը եւ միւսները ընդդէմ Ատրպէյճանի» գործով վճիռը: ՄԻԵԴ-ի որոշմամբ՝ խախտուած է Պայմանադրութեան 2-րդ յօդուածը (կեանքի իրաւունք) ՝ կապուած զինուորներ Էտկար Նարայեանի եւ Էրիկ Աբովեանի մահուան, ինչպէս նաեւ անոնց մահուան հանգամանքներու որեւէ քննութեան բացակայութեան վերաբերեալ:

ՄԻԵԴ-ը արձանագրած է, որ Պայմանադրութեան 13-րդ յօդուածին (արդիւնաւէտ պաշտպանութեան իրաւունք) համապատասխան քննելու անհրաժեշտութիւն չկայ, Պայմանադրութեան 14-րդ յօդուածին (խտրականութեան արգելք) համապատասխան քննելու անհրաժեշտութիւն չկայ: Բացի անկէ, ՄԻԵԴ-ի որոշմամբ՝ Ատրպէյճանը պարտաւոր է Պայմանադրութեան 44-րդ յօդուածի 2-րդ կէտին համաձայն դատարանի վճիռը օրինական ուժի մէջ մտնելու օրուընէ յետոյ երեք ամսուայ ընթացքին դիմողներուն վճարել 16 հազար եւրօ իւրաքանչիւր դիմումի համար, գումարած որեւէ հարկ, որ կրնայ գանձուիլ ոչնիւթական վնասի համար, 2780 եւրօ իւրաքանչիւր յայտի համար, որոնք պէտք է համատեղ վճարուին համապատասխան դիմորդներուն, գումարած որեւէ հարկ, որ կրնայ գանձուիլ անոնցմէ՝ կապուած ծախսերուն հետ: Դիմումատուները Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու զինուորներու հարազատներն են: Գործը կը վերաբերէ ատրպէյճանցի զինուոր Զինկիզ Կուրպանովի կողմէ հայ զինուորներ սպաննելուն:

# Հայաստանի Մէջ Ռուսական Ալիքները Փակելու Հարց Չի Քննարկուիր



Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարար Ռոպերթ Խաչատրեան

«Նոյնիսկ կարիք չի եղել փաստեր ներկայացնելու: Մենք ընդամէնը ասել ենք, որ խախտումներ են եղել, եկէք մանրամասն չքննարկենք խախտումները, եւ իրենք ընդունել են, որ եղել են խախտումներ», անդրադառնալով ռուսական լրատուամիջոցներով հակահայկական բովանդակութիւն տարածելու մասին հարցին՝ ըսած է բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Ռոպերթ Խաչատրեան եւ նշած, որ ռուսական կողմը՝ համապատասխան նախարարութիւնը ընդունած է խախտումներու փաստը: Նախարարը ըսաւ, որ յստակ օրինակներ չեն քննարկուած:

Միաժամանակ նախարարը ըսաւ, որ ռուսական ալիքները Հայաստանի մէջ փակելու հարց չի քննարկուիր՝ անոնք պիտի շարունակեն հեռարձակուիլ:

«Եթէ մեր գործընկերները նշում են, որ քայլեր կը ձեռնարկեն, պարտաւորւում են, որ կը կարողանան ապահովել համաձայնագրի բոլոր կէտերը, դա մեր կողմից ակնկալւում է որպէս նման հաղորդումները եթեր չհեռարձակելու խոստում», ըսաւ նախարարը:

Ռոպերթ Խաչատրեանի կարծիքով՝ նախարարութիւնը արդիւնքներու հասած է իրենց ռուս գործընկերներու հետ խորհրդակցութիւններու շնորհիւ:

Նախարարը ըսաւ, որ իր պաշտօնանկութեան հարցը գոնէ իր հետ չի քննարկուիր:

# ՊԵԿ Նախկին Նախագահին Որդիները Լուացած Են Յանցաւոր Ճանապարհով Ստացուած Շուրջ 1,5 Միլիառ Դրամ, 97 Միլիոն Տոլար Ու 2 Միլիոն Եւրօ



ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրեան

Դատախազը 2023 թուականի Դեկտեմբեր 12-ին հաստատած է Պետական Եկամուտներու Կոմիտէի նախկին նախագահ Գ.Խ.-ի որդի Ա.Խ.-ի եւ եղբօրորդիի, «Մուլտի գրուպ կոնցեռն»-ի գլխաւոր տնօրէն Ս.Ա.-ի եւ դրամատուներէն մէկուն վարորդ Ա.Պ.-ի վերաբերեալ մեղադրական եզրակացութիւնն ու վարոյթի նիւթերուն հետ յանձնել Հակափտածութեան դատարան:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան քննչական գլխաւոր վարչութեան մէջ քննուած քրէական վարոյթով պարզուած է, որ Գ.Խ.-ն, 2008-2016 թուականներուն զբաղեցնելով Մաքսային Պետական Կոմիտէի նախագահի պաշտօնակատարի, նոյն կոմիտէի նախագահի, Պետական Եկամուտներու Կոմիտէի նախագահի եւ ելեւմուտքի նախարարի պաշտօնները, յանձնարարած է կոմիտէին, այնուհետեւ՝ Ելեւմուտքի նախարարութեան պաշտօնատար անձերուն համագործակցիլ իր որդիներ Ա.Խ.-ի եւ Գ.Խ.-ի, ազգական Ա.Խ.-ի կողմէ հիմնադրուած ընկերութեան հետ, վերացնել գնման ընթացակարգին մէջ յառաջացող խոչընդոտներն ու կիրառել աւելի բարենպաստ գնման ընթացակարգեր:

Օգտուելով Գ.Խ.-ի կողմէ ապօրինի կերպով ստեղծուած բարենպաստ պայմաններէն՝ ընկերութիւնը 2008-2020 թուականներու ընթացքին Կոմիտէին հետ կնքած է 4 միլիառ 426 միլիոն 435 հազար դրամ արժէքով ապրանքներու մատակարարման եւ ծառայութիւններու մատուցման պայմանագրեր:

Բացի անկէ, Գ.Խ.-ն, իրմէ ծառայողական կախուածութեան մէջ գտնուող եւ այլ անձերու մասնակցութեամբ, ապահոված է, որ իր որդիներուն ու եղբօրորդիին ընկերութեան հետ կնքուի 19 ծրագրային մուտուլի ձեռքբերման պայմանագիր՝ իրական արժէքէն էապէս բարձր՝ 4 միլիառ 283 միլիոն 580 հազար դրամով (նշուած ընկերութեան հետ պայմանագիր կնքելու ատեն՝ գնում կատարելու վերաբերեալ մրցոյթ չէ կայացած, ընտրուած է առանց գնումներու յայտարարութիւնը նախապէս հրապարակելու բանակցային ընթացակարգը, հրաւէրը ուղարկուած է միայն իր որդիներուն ու եղբօրորդիին ընկերութեան):

Գ.Խ.-ի որդիներ Ա.Խ.-ն, Գ.Խ.-ն եւ եղբօրորդի Ա.Խ.-ն մասնակցած ու ղեկավարած են Հայաստանի Հանրապետութեան մէջ գործունէութիւն իրականացնող շուրջ 48 ընկերութիւն եւ, օգտուելով Գ.Խ.-ի զբաղեցուցած պաշտօններով պայմանաւորուած հովանաւորչութենէն, 2011-2016 թուականներու ընթացքին թաքցուցած են վերոնշեալ կազմակերպութիւններու գործունէութեան իրական ծաւալները: Այդպիսով յառաջացած են չյայտարարագրուած եւ հարկային մարմինի հսկողութենէն դուրս մնացած եկամուտներ՝ 1 միլիառ 555 միլիոն դրամ, 97 միլիոն 203 հազար ԱՄՆ տոլար, 2 միլիոն 65 հազար եւրօ:

## ԼՈՒՐԵՐ

### Վարչապետ Փաշինեան Յոյս Յայտնած Է, Որ Խաղաղութեան Գործընթացը Միտումնաւոր Չի Ձգձգուիր



Փաշինեան ելոյթ կ'ունենայ Արտաքին գործերու նախարարութեան մէջ Ամանորի եւ Սուրբ Ծննդեան առթիւ կազմակերպուած ընդունելութեան ժամանակ

Հայաստանի կառավարութեան առաջնահերթութիւններու շարքին է տարածաշրջանային յարաբերութիւններու բարելաւումը եւ կարգաւորումը, Արտաքին գործերու նախարարութեան մէջ Ամանորի եւ Սուրբ Ծննդեան առթիւ կազմակերպուած ընդունելութեան ժամանակ յայտնած է վարչապետ Փաշինեանը: «Շարունակում ենք հաւատարիմ մնալ խաղաղութեան օրակարգին արդէն իսկ համաձայնեցուած երեք սկզբունքների շրջանակներում: Յոյս ունենք, որ վերջին շրջանում տարածաշրջանում եւ տարածաշրջանի երկրներում տեղի ունեցող իրադարձութիւնները վերջնարդիւնքում չեն վկայի այն մասին, որ տեղի է ունենում խաղաղութեան գործընթացի միտումնաւոր ձգձգում», ըսած է ան:

ԱԳՆ-ի մէջ հայաստանցի դիւանագէտներէն բացի, նաեւ օտարերկրեայ դեսպանները եղած են: Վարչապետ Փաշինեան անոնց ներկայութեամբ խօսած է Հայաստանի ակնկալիքներէն ու դժգոհած է Արցախի մէջ ցեղային զտումը կանխելու հարցով միջազգային անգործութենէն: «2023 թուականը մեծ մարտահրաւէրների տարի էր, այդ մարտահրաւէրներից առանցքայինը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ցեղային զտումներն էին, եւ դրա հետեւանքով, ըստ էութեան, Լեռնային Ղարաբաղի հայաթափումը: Այս առումով, ի հարկէ, տեղի ունեցածը հետեւանք էր մի իրավիճակի, երբ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը բազմիցս հրապարակային ահազանգում էր, որ իրադարձութիւնները զարգանում են այդ ուղղութեամբ եւ ակնկալում էր միջազգային յստակ գործողութիւններ, բայց պիտի արձանագրենք նաեւ, որ այդ գործողութիւնները մենք չտեսանք», նշած է ան: Վարչապետը կրկնած է՝ եթէ հայերը Լեռնային Ղարաբաղ վերադառնալու հնարաւորութիւն չունենան, իր կառավարութիւնը ամէն ինչ պիտի ընէ, որ անոնք մնան Հայաստանի մէջ:

### Լեմքինի Անուան Հիմնարկը ԱՄՆ-ին Կոչ Ըրած Է Պաշտպանելու Հայերուն՝ Երուսաղէմի Տարածքի Վէճին Մէջ

Լեմքինի անուան Ցեղասպանութեան կանխարգիլման հիմնարկը Միացեալ Նահանգներուն եւ Իսրայէլի այլ դաշնակիցներուն կոչ ըրած է պարտաւորութիւն ստանձնելու հայ համայնքին երաշխաւորելու պատշաճ իրաւական աջակցութիւն Հայկական Թաղամասի «Կովերու այգի» տարածքին շուրջ վէճին մէջ: Այս մասին կ'ըսուի հիմնարկի յայտարարութեան մէջ:

Նոյեմբեր 1-ին Հայ Առաքելական Եկեղեցւոյ Երուսաղէմի պատրիարքարանը նամակ յղած է Xana Gardens Ltd ընկերութեան՝ չեղեալ համարելու 2021 թուականի Յուլիս 8-ի պայմանագիրը, ըստ որուն՝ տարածքը 99 տարիով վարձակալութեան յանձնուած է գործարար Տենիէլ Ռուպինշթէյնին՝ հիւրանոց կառուցելու համար: Անկէ յետոյ իրավիճակը լարուած է, կողմերուն միջեւ պարբերաբար բախումներ տեղի կ'ունենան:

Հիմնարկը խորապէս մտահոգուած է Երուսաղէմի մէջ հայկական Թաղամասի ամբողջականութեան սպառնալիքով: Յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, կ'ընդգծուի, որ այս տարուայ աշնան հայերը արդէն կորսնցուցած են պատմական կարեւոր հող՝ Լեռնային Ղարաբաղը, որուն բնակչութիւնը ատրպէյճանական յարձակման պատճառով ստիպուած եղած է լքել իր տուները:

«Ջնայած Երուսաղէմի մէջ հայ բնակչութիւնը այսօր փոքրաթիւ է, սակայն Հայկական Թաղամասը կը շարունակէ մնալ սփիւռքի կարեւոր մասը: Այն պահպանուածներէն այսօր ապրող հնագոյն հայկական սփիւռքն է», կ'ըսուի յայտարարութեան մէջ:

Հիմնարկը ընդգծած է, որ Երուսաղէմի հայկական Թաղամասի մշակութային ժառանգութիւնը պէտք է պաշտպանուած ըլլայ կառուցապատողներէն:

### Յոյսով Ենք, Որ Շատ Շուտով Խաղաղութեան Համաձայնագրի Կնքման Ականատեսը Կ'ըլլանք. Օ'Պրայըն

ԱՄՆ յոյսով է, որ շուտով խաղաղութեան համաձայնագիր կը կնքուի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ: Այս մասին յայտնած է ԱՄՆ պետական քարտուղարին Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով օգնական Ճէյմս Օ'Պրայընը «Ամերիկայի Ձայն»-ին տուած հարցազրոյցին:

«Կը կարծեմ, որ իսկապէս կարեւոր է, որ երկու երկիրները խօսին միմեանց հետ եւ ձեռք բերեն գործնական պայմանաւորուածութիւններ: Զինուորականներու ազատ արձակման մասին յայտարարած էին անցեալ շաբաթ, եւ ահա, բառացիօրէն այս շաբաթ, անոնք արդէն տունն են: Երկիրները հանդէս եկած են համատեղ յայտարարութեամբ, որուն մէջ ցոյց տուած են միմեանց աջակցութիւնը շատ առումներով, այդ շարքին՝ իրենց միջազգային ձգտումներուն մէջ, օրինակ՝ այն բանով, որ Ատրպէյճանը կայանցնէ ՄԱԿ-ի կլիմայի յաջորդ համաժողովը, ինչին իրաւունքը այժմ ունի»,- ըսած է ան:



ԱՄՆ պետական քարտուղարին օգնական Ճէյմս Օ'Պրայըն

Անոր խօսքով՝ նման աջակցութեան դրսեւորումը կարեւոր քայլ է երկկողմ բնականոն յարաբերութիւններ կառուցելու ճանապարհին:

«Մենք յոյսով ենք, որ շատ շուտով կողմերու խաղաղութեան համաձայնագրի ձեռք բերման ականատեսը պիտի ըլլանք: Այս հարցով երկու կողմերն ալ շահագրգռուածութիւն յայտնած են:

Մենք, ինչպէս նաեւ Եւրոմիութեան մեր գործընկերները եւ այլ կողմեր պատրաստ ենք օգնելու անոնց այս հարցով: Մենք պիտի փափաքէինք, որ այս ամէնը շուտ աւարտէր, քանի որ խաղաղութեան արագ կնքումը հսկայական օգուտներ պիտի բերէ», ընդգծած է Օ'Պրայընը:

Ան յիշեցուցած է, որ Ուաշինկթընը բանակցութիւններու քանի մը փուլ կատարած է երկու երկիրներու արտաքին գործերու նախարարներուն միջեւ՝ յաւելելով, որ անոնք կրկին պիտի հանդիպին:

«Մենք պատրաստ ենք օգնելու: Մենք երկու կողմերուն կոչ կ'ընենք հանդիպելու, եւ այս պահուն անոնցմէ իւրաքանչիւրը յայտարարած է, որ պատրաստ է աշխատելու այս ուղղութեամբ», եզրափակած է ան:

### Լուքաշենքօն Յիշեցուցած Է Ալիեւի Առաջարկը Սերժ Սարգսեանին՝ 5 Միլիառ Տոլարի Վերաբերեալ

Պելառուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքօն յայտնած է, որ ղարաբաղեան հակամարտութեան մագլցում չէր ըլլար, եթէ կողմերը ժամանակին լսէին խորհուրդները եւ ձեռնարկէին անհրաժեշտ միջոցներ: Այս մասին ան յայտնած է ԱՊՀ անդամ պետութիւններու անվտանգութեան մարմիններու եւ հետախուզական ծառայութիւններու ղեկավարներու 19-րդ նիստին մասնակցող պատուիրակութիւններու ղեկավարներու հետ հանդիպման ընթացքին:

«Այո՛, մենք որոշ տեղ սխալներ թոյլ տուինք: Այո՛, որոշ տեղ չյաջողեցաւ՝ Հայաստանի մէջ, Ատրպէյճանի մէջ: Եկէք սա շտկենք», ըսած է ան:



Պելառուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքօ

Լուքաշենքօն յայտնած է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը մեղաւոր չէ տեղի ունեցածին համար: Անոր խօսքով՝ ստեղծուած իրավիճակը ան «ժառանգութիւն» ստացած է: Ան յիշեցուցած է իր զրոյցը Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ատրպէյճանի ղեկավար Իլհամ Ալիեւի հետ, որուն ժամանակ վերջինս հինգ շրջաններու դիմաց 5 միլիառ տոլար կ'առաջարկէր, սակայն հայկական պետութեան ղեկավարը չընդունեց անոր առաջարկը:

«Եթէ երթային անոր, չէր ըլլար առիթ սանձազերծելու այս պատերազմը: Ամէն ինչի շուրջ կը պայմանաւորուէին: Ինչո՞ւ այդ ժամանակ չըրին: Ջըրին՝ ստացան: Ի՞նչ է, Հայաստանի համար աւելի լա՞ւ է: Ոչ: Եւ Ատրպէյճանի համար հեշտ չէ: Իլհամը խելացի մարդ է այս հարցին մէջ», յայտնած է Պելառուսիոյ ղեկավարը:

Ան նաեւ յայտնած է, որ վերջերս Տուպայի մէջ զրուցած է իր ատրպէյճանցի գործընկերոջ հետ, անոր հետ քննարկած է Ղարաբաղի հարցը եւ բնակչութեան դուրս գալը:

«Կ'ըսէ՝ մենք ոչ մէկուն պիտի չդպնանք: Մենք, ընդհակառակը, այնպէս պիտի ընենք, որ բոլորը հասկնան, որ մենք քաղաքակիրթ երկիր ենք: Մենք պիտի օգնենք ընկերա-կենցաղային մակարդակով: Այնտեղ իշխանութիւնը ուժեղ է, անոնք ի վիճակի են այդ ընելու. ե՛ւ աջակցիլ, ե՛ւ օգնել», ըսած է Լուքաշենքօն:

## Հայաստանի Մէջ NETFLIX-ի Համար Հաղորդաշարեր Պիտի Նկարահանուին



ԿԳՄՄ նախարարութեան եւ Գերմանացի ֆիլմ արտադրող Թիլ Շվայկերի ներկայացուցչին միջեւ կը ստորագրուի համաձանագիր

*Հայաստանի մէջ NETFLIX-ի համար ֆիլմեր ու հաղորդաշարեր պիտի նկարահանուին: Այս մասին Ֆէյսպուքի իր էջով գրած է Հայաստանի Ազգային Ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Սիսակ Գաբրիէլեանը:*

*«Ինչպէս եւ ակնկալում էի, ֆիլմի օրէնքում վերջերս կատարուած փոփոխութիւնները գրաւիչ են դարձնում Հայաստանը ֆիլմարտադրութեան համար: Գերմանացի յայտնի դերասան, ֆիլմի արտադրող Թիլ Շվայկերի ներկայացուցչի հետ այսօր ԿԳՄՄ նախարարութիւնում ստորագրեցինք համագործակցութեան յուշագիր: Ընդհանուր երեք ֆիլմ, «Underdog», «Dead by Dawn», «Collapse» (Նեթֆլիքսի 8 մասնոց ֆիլմ), որոնք կը նկարահանուեն Հայաստանում: Նկարահանումները նախատեսում են սկսել տարեսկզբին: Սա կը լինի նոր օրէնքի փաստացի առաջին կիրառումը:*

*«Յիշեցնեմ. սահմանուած կանոնների պահպանման դէպքում, պետութիւնը ֆիլմարտադրողներին հետ կը վերադարձնի ներդրուած գումարի 10-40 տոկոսը: Յառաջիկայ օրերին ԿԳՄՄ նախարարութիւնը կը հրապարակի համապատասխան ապրանքների, ծառայութիւնների եւ դրանցից օգտուելու կարգն ու պայմանները:*

*«Ըստ մասնագէտների, տեղի առումով մեր երկիրը բաւականին յարմար է ֆիլմատադրութեան համար: Տարուայ գրեթէ բոլոր ժամանակահատուածներում միաժամանակ կարելի է ե՛ւ ձիւնոտ սարեր ունենալ, ե՛ւ շոգից հալուող ասֆալթ, եւ գեղեցիկ ժամանակից շինութիւններ, փողոցներ, եւ լքուած ու անմարդաբնակ գիւղեր ու գործարաններ», գրած է Գաբրիէլեան:*

## Wanderlust Reader Travel Awards-ին Մէջ Հայաստանը Յայտնուած Է Զբօսաշրջային Ուղղութիւններու Տասնեակին Մէջ




*Լոնտոնի մէջ կայացած Wanderlust Reader Travel Awards-ի մէջ Հայաստանը յայտնուած է նոր զարգացող ամենացանկալի զբօսաշրջային ուղղութիւններու տասնեակին մէջ, յայտնած է է Զբօսաշրջութեան Կոմիտէն:*

*«Հարուստ մշակոյթը, հիասքանչ բնապատկերները եւ ջերմ հիւրընկալութիւնը Հայաստանը դարձնում են պարտադիր այցելութեան վայր», նշուած է հաղորդագրութեան մէջ:*

---

## Վարչապետ Փաշինեան Կ'արձագանքէ

Շարունակուած էջ 1-էն

*Ան յիշեցուց, որ յետոյ Ատրպէյճան ներխուժեց ՀՀ տարածք, Երեւանը դիմց ՀԱՊԿ-ին ու Ռուսաստանի Դաշնութեան սակայն տեղի ունեցաւ զէրոյ արձագանք ռուսական կողմէն, միւս իրադարձութիւններու, անոնց շարքին՝ Փաուլխի դէպքերուն ժամանակ ալ ռուս խաղաղապահները չեն արձագանքած:*

## Հայաստանի Մէջ Տեղի Ունեցաւ Աշխատանքի Միջազգային Համաժողով



Աշխատանքի միջազգային համաժողովը Երեւանի մէջ

*Չնայած Մարտահրաւէրներուն Եւ Դժուարութիւններուն, Հայաստանի Մէջ Նկատելի Են Աշխատանքի Ոլորտին Մէջ Զարգացումները. Կիլպերթ Եունկպօ*

*Հայաստանի մէջ առաջին անգամ տեղի ունեցած է Աշխատանքի միջազգային համաժողով՝ Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան նախաձեռնութեամբ եւ Աշխատանքի միջազգային կազմակերպութեան (ԱՄԿ) գլխաւոր տնօրէն Կիլպերթ Եունկպոյի մասնակցութեամբ:*

*Միջոցառման մասնացած են ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Նարեկ Մկրտչեանը, օրէնսդիր եւ գործադիր մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ բարձրաստիճան պաշտօնեաներ՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Քաթարէն, Հնդկաստանէն, Շուէտէն, Սինկափուրէն, Ուզպէքիստանէն, Ֆրանսայէն եւ շարք մը այլ երկիրներէ:*

*Համաժողովին բացման ելոյթով հանդէս եկած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Կարեւորելով աշխատանքի դերը քաղաքակրթութեան եւ զարգացման հիմքին՝ վարչապետը աշխատանքի գործօնը դիտարկած է նաեւ որպէս մարդոց ներուժի իրացման եւ բացայայտման հնարաւորութիւն: «Աշխատանքի ու աշխատանքային յարաբերութիւնների հետ կապուած հարցերը, ի հարկէ, մեծ մարտահրաւէրներ են պարունակում իրենց մէջ, եւ ինչպէս նման դէպքերում ասւում է՝ նաեւ մեծ հնարաւորութիւններ: Ի հարկէ, շահող են դուրս գալիս այն երկրները եւ հասարակութիւնները, ովքեր կարողանում են հասցէագրել ի յայտ եկած մարտահրաւէրները եւ հակասութիւնները: Բացի համաշխարհային մարտահրաւէրներից, Հայաստանի Հանրապետութիւնը՝ մենք էլ մեր հերթին ունենք մեր տեղային մարտահրաւէրները, որոնք կապուած են ընկերային քաղաքականութեան եւ աշխատանքի քաղաքականութեան հետ: Ընդհանրապէս՝ ամենամեծ մարտահրաւէրն այն է, որ առաջինը՝ պետութիւնը եւ հասարակութիւնն աշխատանքի միջոցով կարողանան իրացնել զարգացման իրենց ներուժը, երկրորդը, որը նոյնքան կարեւոր է, որ անհատը աշխատանքի մակարդակում կարողանայ զարգացնել եւ բացայայտել իր ներուժը: Միշտ չէ, որ այս երկու անհրաժեշտութիւնները համընկնում են, որովհետեւ խնդիր մէկ՝ այնպէս անել, որ մարդիկ աշխատելու հնարաւորութիւն ունենան եւ խնդիր երկու՝ այնպէս անել, որ մարդիկ ունենան այնպիսի աշխատանքով զբաղուելու հնարաւորութիւն, որն իրենց համար հաճելի է, որն իրենց համար ապահովում է որոշակի կենսամակարդակ եւ ներուժի որոշակի բացայայտում ու զարգացում», նշած է վարչապետը:*

*Կիլպերթ Եունկպօն իր ելոյթին մէջ ըսած է, որ չնայած առկայ մարտահրաւէրներուն եւ դժուարութիւններուն, Հայաստանի մէջ նկատելի է աշխատանքի ոլորտին մէջ առկայ զարգացումները: Աշխատանքի միջազգային կազմակերպութեան գլխաւոր տնօրէնը կարեւորած է նաեւ աշխատանքի ոլորտին մէջ արհեստագիտութիւններու զարգացման դերը, որոնք կրնան մեծապէս նպաստել մարդոց կեանքի որակի լաւացման:*

*«Հակամարտութիւններու եւ ճգնաժամերու հետեւանքով կը մեծնայ գործազրկութեան մակարդակը, եւ մենք պէտք է ամէն ինչ ընենք, որ յաղթահարենք այս իրավիճակը: Արհեստագիտութիւններու զարգացումը եւս կրնայ նպաստել մարդոց կեանքի որակի լաւացման: Այս գործին մէջ շատ կարեւոր է արհեստական բանականութեան դերը, որ կը խթանէ աշխատաշուկայի զարգացումը», նշած է Եունկպօն:*

## Փութինը ԱՊՀ Ղեկավարները Կը Սպասէ Սան Փեթերպուրկի Մէջ

*Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին ԱՊՀ երկիրներէն իր գործընկերները կը սպասէ Դեկտեմբերի վերջը Սան Փեթերպուրկի մէջ կայանալիք աւանդական ոչ-պաշտօնական հանդիպման:*

*«Յոյսով եմ, որ շուտով կը տեսնուինք Սան Փեթերպուրկի մէջ՝ ԵԱՏՄ Բարձրագոյն տնտեսական խորհուրդի նիստին եւ ԱՊՀ ոչ-պաշտօնական հանդիպման», ըսած է Փութին տեսաուղերձով, որ հասցէագրուած է Մոսկուա ժամանած ԱՊՀ կառավարութիւններու ղեկավարներուն:*

*Վլատիմիր Փութինը այդ ուղերձին մէջ նաեւ խնդրած է ԱՊՀ ղեկավարներուն փոխանցել իր ջերմ ողջոյնները:*

# Չափազանցուած Ուժը Կրնայ Ժխտական Արդիւնք Տալ



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ

*5 Դեկտեմբեր 2023-ին, Ամերիկայի Քոնկրեսի ենթայանձնախումբերէն մէկուն կողմէ (House Committee on Education and Workforce) հարցաքննութեան կանչուած էին Ամերիկայի հռչակաւոր համալսարաններէն երեքին՝ Harvard-ի, U-Penn-ի եւ MIT-ի նախագահները, պատասխան տալու իրենց համալսարաններէն ներս տեղի ունեցող հակասեմական կամ հակահրէական դէպքերու մասին:*

*Երեք համալսարաններուն մէջ ալ կարգ մը խռովութիւններ տեղի ունեցած էին Պաղեստինի ի նպաստ ցոյցերու ընթացքին, ուր ցուցարարները մեղադրած էին Իսրայէլը որպէս Համասի ահաբեկչութեան ծնունդ տուող աղբիւր՝ զինք արժանի դարձնելով այդպիսի ահաբեկչութեան: Ամերիկայի հրեայ համայնքը մտահոգ էր, որ այդ համալսարանները պէտք եղած չափով զսպած չէին հակաիսրայէլեան շարժումները իրենց շունչին տակ, զսպուած չէր առելավառ կեցուածքը ցուցարարներուն՝ հրեայ աշակերտներու եւ ուսուցիչներու դէմ:*

*Հրեայ ծագումով քոնկրեսական էլիզ Սթեֆանիք Հարվըրտի նախագահին ուղղած իր հարցումով ուզեց յստակ պատասխան ստանալ, թէ հրեաներու դէմ ցեղասպանութեան կոչ ընելը «ահանդստացնող» (harassment) բառին տակ իյնալով չեղում կը սեպուի՞ համալսարանի կանոններէն եւ պատժելի կը դառնա՞յ: Երբ յստակ պատասխան չստացաւ, ան ուզեց բացայայտ «այո» կամ «ոչ» պատասխան մը:*

*Երեք համալսարաններու նախագահները փորձեցին ըսել, թէ ատելութեան արտայայտութիւնը (hate speech) կախում ունի բնագիրէն (context) եւ չի կրնար դատավարելի (actionable) դառնալ: Աշակերտները կրնան արտաքսուիլ, եթէ ատելութեան արտայայտութիւնը գործի ընթացք (conduct) ստանայ: Երեքն ալ ուզեցին վեր պահել ազատ արտայայտուելու իրաւունքը եւ քոնկրեսական Էլիզ Սթեֆանիքին չուզեցին «այո» կամ «ոչ» պատասխան տալ:*

*Անմիջապէս երեք նախագահներուն հրաժարականը պահանջող ձայներ բարձրացան: U-Penn-ի նախագահը իր հրաժարականը տուաւ, իսկ միւս երկու նախագահներուն կողքին կանգնեցան իրենց համալսարաններուն մէջ գործող աշխատակիցները: Միլիառատէր Պիլ Աքման, որ 24 միլիոն նուիրատուութիւն ըրած էր Հարվըրտին, խիստ քննադատութիւններով պահանջեց նախագահին հրաժարականը: Ուրիշ մեծ նուիրատուներ ալ զայրոյթ յայտնեցին՝ խարանելով նախագահներուն կողմէ եղած անկողմնակալ արտայայտութիւնները:*

*Առաւել՝ 71 քոնկրեսականներ, Հանրապետական եւ Տեմոքրաթ կուսակցութիւններէն, նամակ յղեցին երեք համալսարաններու կառավարիչներու խորհուրդներուն (Board of Directors)՝ անոնցմէ պահանջելով հրաժարականները այդ երեք նախագահներուն:*

*Իսրայէլի ՀԶՕՐ բանակը եւ Ամերիկայի ՀԶՕՐ համայնքը կամ լոպին ձեռք-ձեռքի տուած՝ ամէն ինչ կ'ընեն խեղդելու համար ամէն ձայն, որ կը բարձրանայ Իսրայէլի չափազանցեալ ուժի կիրարկումը դատապարտող:*

*Խումբ մը ահաբեկիչներու անընդունելի արարքին դէմ ոչնուազ ահաբեկիչ արարքով Իսրայէլի որդեգրած պատժամիջոցը երկու միլիոն ժողովուրդի դէմ՝ անոնց տուները քարուքանդ դարձնելով, անմեղ մանուկները հազարներով սպաննելով ու որբացնելով, ապրելու ամէն պէտքերէ ժողովուրդ մը ամբողջ զրկելով ո՛չ համբաւ, ո՛չ ալ պատիւ կը բերէ Իսրայէլի եւ հրեայ ժողովուրդին: Ցեղասպանութիւն ճաշակած ժողովուրդ մը ինչպէ՞ս կը յանդգնի այսքան ամբարտաւանութեամբ անտեսել պահանջքը աշխարհի, որ դադրին կրակն ու սպանդը: Հզօր հրեայ համայնքի պահանջքին ենթարկուած Ամերիկան էր, որ դէմ կեցաւ պատերազմը դադրեցնել ուզող ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ պահանջքին:*

*Այսքան ամբարտաւանութիւն վստահաբար չի բխիր գիտակից հրէութիւն կամ հակասեմականութիւն ՏԱՐԱԾԵԼ ՋՈՒԶՈՂ հրեաներու կողմէ: Նեթանիահուն եւ իր շուրջ հաւաքուած կրօնապաշտները Իսրայէլի նոյնքան մեղադրելի են՝ որքան «Համաս»-ական կրօնապաշտները. երկուքն ալ կը մերժեն երկու պետութիւն ստեղծելու Քեմբ Տէյվիտի մէջ առնուած որոշումը՝ միանգամընդմիշտ լուծելու համար արաբ-իսրայէլեան հակամարտութիւնը:*

*Չափազանցեալ ուժի գործածութիւնը շատ հաւանաբար պիտի տայ իր ժխտական արդիւնքը, որու պատճառաւ վերջերս նախագահ Պայտընի նախնական անվերապահ աջակցութիւնը Նեթանիահուի սանձարձակ քայլին՝ Կազան հիմնայատակ կործանելու եւ Համասը արմատախիլ ընելու, սկսած է իր վերապահութիւնը զգալի դարձնել՝ խօսելով լուծումի մը մասին, որով պաղեստինցիներուն պէտք է տալ պետութիւն մը:*

*Նախագահ Պայտըն, վստահաբար, նման արտայայտութիւն ունեցաւ խորհրդակցելով Ամերիկայի հռչակաւոր հրեայ լոպիին եւ Իսրայէլով մտահոգ դաշնակիցներուն հետ, որոնք չափազանցեալ ուժի կիրարկումին մէջ կը տեսնեն ոչ-նպաստաւոր աշխարհ մը Իսրայէլի հանդէպ: Վստահաբար երեք հռչակաւոր համալսարաններու նախագահներուն հետ կը կանգնին նաեւ մեծ թիւով ամերիկացիներ, որոնք հեշտ աչքով չեն դիտեր ամերիկայի հզօր հրեայ լոպիին ամբարտաւանութիւնն ու մեծխօսիկութիւնը (bullying) իրենց համբաւաւոր համալսարաններու նախագահներուն նկատմամբ:*

# Կազայի Շարունակուող Ողբերգութիւնը

Շարունակուած էջ 1-էն

հետագայ զարգացումները եկան փաստելու որ, այդ եւս պատրանք էր:

Կազայի պատերազմը երկու մասի բաժնած է նաեւ Միացեալ Նահանգներու հանրային կարծիքը: Երիտասարդ սերունդը սկսած է թեքուիլ դէպի պաղեստինցի ժողովուրդի իրաւունքերը: Այս երեւոյթը կրնայ ապագային ազդել Իսրայէլի նկատմամբ Ամերիկայի վարած քաղաքականութեան վրայ: Առանց Միացեալ Նահանգներու նիւթական եւ ռազմական օժանդակութեան վտանգի տակ կը յայտնուի Իսրայէլի գոյութիւնը:

Սկզբնական շրջանին Պայտընի վարչակարգը անվերապահ զօրակցութիւն յայտնեց Իսրայէլին եւ սկսաւ ռազմական աջակցութիւն փութացնել Թել Ավիւին: Ժողովուրդի տրամադրութեան փոփոխութիւնը եւ զինադադարի պահանջով տեղի ունեցող բազմամարդ բողոքի ցոյցերը զգալիօրէն ազդած են Սպիտակ Տան վարած քաղաքականութեան վրայ: Նախագահ Պայտըն կը զգուշացնէ Իսրայէլին, որ ան սկսած է կորսնցնել աշխարհի համակրանքը: Ուաշինկթըն կը փորձէ վերակենդանացնել երկու պետութեան՝ Իսրայէլի եւ Պաղեստինի, իր քաղաքականութիւնը: Սակայն այս պայմաններուն տակ այդ ծրագրի իրականացումը կը բախի դժուարութիւններու, նոյն այդ երկու ծայրայեղական մօտեցումներուն պատճառաւ: Նեթանյահուն կտրականօրէն դէմ կ'արտայայտուի երկու պետութեան գաղափարին, իսկ Համասի համար եւս այդ տեսակէտը ընդունելի չէ, քանի որ ան կը հետապնդէ Իսրայէլ պետութեան վերացումը քարտէզէն:

Այսպիսով, Միջին Արեւելքը կը շարունակն ամբողջ աշխարհին համար մնալ ապակայունացնող տարածաշրջան մը, իսկ պաղեստինցի ժողովուրդը՝ Կազայի մէջ ու այլուր կը շարունակէ տառապիլ՝ առանց անկախութեան, խաղաղութեան ու բարեկեցիկ կեանքի մը հեռանկարին:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**
**«ՄԱՍԻՍ»**

# Ատամ Շիֆ Կոչ Կ'ընէ Յաւելեալ Օգնութիւն

Շարունակուած էջ 1-էն

*չելու իրենց կեանքին համար:*

